## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նազենի Ղարիբյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ մշակույթի նախարարի պարտականությունները կատարող

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Բրեստ (Բելառուսի Հանրապետություն)

2019 թվականի ապրիլի 4-6-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՀՀՄՀ հումանիտար համագործակցության հիմնադրամ

Բելառուսի մշակույթի նախարարություն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Բրեստը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք 2019» միջպետական ծրագրի բացման արարողությանը:

Ս. թ. ապրիլի 4-6-ը, գլխավորելով հայկական պատվիրակությունը, մեկնել էի Բելառուս՝ մասնակցելու «Բրեստը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք 2019» միջպետական ծրագրի բացման արարողությանը: Հայկական պատվիրակության ներկայությունը կարևոր էր, քանի որ մշակութային մայրաքաղաքի տիտղոսը պաշտոնապես պետք է Գորիսից հանձնվեր Բրեստին:

Ապրիլի 5-ին՝ վաղ առավոտյան Բրեստի քաղաքապետարանի ներկայացուցիչների ուղեկցությամբ մեր պատվիրակությունն այցելեց Բրեստի ամրոց և ծաղիկներ դրեց Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հավերժական կրակի հուշարձանին (եղբայրական գերեզմանի անունների մեջ առանձնանում էին հայկական անուններ): Այնուհետև ծաղիկներ դրեցինք զինվորական գերեզմանոցի հարևանությամբ հայկական համայնքի կողմից կանգնեցված խաչքարի առջև:

Տոնական օրվա հանդիսավոր բացումից հետո, որտեղ հնչեց նաև իմ ելույթը, մեր պատվիրակությունը մասնակցեց կլոր սեղանին: Հումանիտար ֆոնդի համանախագահ Միխայիլ Շվիդկոյի հանձնարարականով ինձ առաջարկվեց վարել կլոր սեղանը՝ բելառուս գործընկերուհու հետ: Թեման էր՝ «մշակութային ինտեգրացիան»: Հայկական կողմից ելույթ ունեցավ գրաքննադատ և թարգմանիչ Լիլիթ Մելիքսեթյանը: Նրա խոսքը նվիրված էր գրականության թարգմանության խնդիրներին՝ ԱՊՀ երկրների տարածքում: Խոսքը մեծ հավանության արժանացավ, և հումանիտար ֆոնդի տնօրեն Իկսանովի կողմից Լիլիթ Մելիքսեթյանը հրավիրվեց մասնակցելու Թուրքմենստան ս. թ. մայիսին կայանալիք հաջորդ հանդիպմանը, որտեղ քննարկվող թեմաներից մեկը գրականությունն ու թարգմանությունն է:

Երեկոյան մասնակցեցինք հանդիսավոր գալա համերգին, որին հայկական պատվիրակությունը մասնակցեց դուդուկահար Կարեն Վիրաբյանի երկու ստեղծագործության կատարմամբ:

Պատվիրակության երրորդ անդամը՝ խեցեգործ Նարինե Մանուչարյանը, այցելեց խեցեգործական արվեստանոցներ և կապեր հաստատեց՝ հետագայում միացյալ նախագծեր իրականացնելու նպատակով:

Համերգին հետևեց պաշտոնական ճաշկերույթը: Առանձնազրույց ունեցա Բելառուսի հանրապետության մշակույթի նախարարի տեղակալի հետ, ում հետ քննարկեցինք ս. թ. մայիսին Երևանում կայանալիք «Բելառուսի մշակութային օրեր» ծրագիրը և ներկայացուցչական կազմը:

Հաջորդ օրը՝ ապրիլի 6-ին այցելեցինք Բելառուսի հայտնի արգելոցը՝ Բելովեժյան Պուշչան:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Մասնակցություն «Բրեստը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք 2019» միջպետական ծրագրի բացման արարողությանը:
2. ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի պատվավոր տիտղոսի հանձնում Գորիս քաղաքից Բրեստ քաղաքին:
3. Ընթացիկ և հետագա համագործակցությունների ծրագրերի, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում;
4. Մասնակցություն «Մշակութային ինտեգրացիա» խորագրով կլոր սեղանին
5. ԱՊՀ անդամ պետությունների հետ համագործակցության խթանում
6. Բելառուսի գործընկեր կազմակեպությունների հետ կապերի հաստատում:

Նազենի Ղարիբյան

09.04.2019

X _____